ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԵԳ ԱՐՄԱՆԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (XI ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ - XIII ԴԱՐ)

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության
սեղմագիր

Երևան – 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մալխասյան Միքայել Արմենի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր
Բոզոյան Ազատ Արտաշի

պատմական գիտությունների թեկնածու
Թորոսյան Վահե Համլետի

Առաջատար կազմակերպություն՝ Մատենադարան. Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2025 թ. հունիսի 27-ին, ժամը 14^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թ. մայիսի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
պ.գ.թ., դոցենտ Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Միջնադարյան Հայաստանի պատմությունը քաղաքական առումով ունի մի կարևոր առանձնահատկություն: Նախ, մեկ հազարամյակի կտրվածքով այն ներառում է պետականության երկու անկում (Արշակունյաց և Բագրատունյաց թագավորությունների) և երեք վերականգնում (Բագրատունյաց թագավորություն, Կիլիկյան Հայաստան, Զաքարյան իշխանապետություն)[1]: Սա եզակի[2] իրողություն է միջնադարյան տեսնակյունից, քանի որ պետությունները կամ ուղղակի անկում էին[3] կամ այլ պետությունների կազմ մտնելով՝ վերափոխվում[4] կամ անսասան գոյատևում էին[5]: Այսպիսով՝ հայոց քաղաքական պատմության խորքային ըմբռնման համար կարևոր է ուսումնասիրել պետականության անկման-վերականգնման գաղափարական ակունքները, ինչը և սույն հետազոտության հիմնահարցերից է: Այս հարցի քննության համար կարևոր է հասկանալ դարաշրջանի հայության քաղաքական պատկերացումների համակարգը, մանրազնին քննության առնել այդ համակարգի առանցքային և երկրորդական պատկերացումները: Քանզի որոշակի քաղաքական գաղափարները կղզիացած իրողություններ չեն, պետականության բնաշրջման գաղափարական հետագիծը քննելու համար, անհրաժեշտ է այն ուսումնասիրել քաղաքական մտածողության ընդհանուր համալիրի մեջ: Թեպետ, գաղափարները, այն պահից, երբ դրանք արդեն լիովին ձևակերպված են, հաճախ ապրում են ինքնուրույն զարգացում և խորապես ազդում են հասարակության այլևայլ գործընթացների վրա, սակայն կարևոր է նկատել, որ առանձին գաղափարաները առաջանում են որոշակի հասարակական միջավայրերում, և լիովին ձևակերպվելուց հետո էլ՝ նրանց ներազդեցությունը հասարակության վրա անպայմանորեն փոխկապակցված է տվյալ ժամանակահատվածում հասարակական իրականության երանգավորումներից: Այդ իսկ պատճառով սույն ատենախոսության մեջ նշանակալի չափով ուշադրություն ենք դարձրել նաև հասարակական պատմության հարցերին: Գաղափարական զարգացումները քննելիս, փորձել ենք ուշադրություն դարձնել դրանց ծագման հասարակական միջավայրի վրա, իսկ նախընթաց ժամանակաշրջաններում ձևակերպված գաղափարների դեպքում, ուշադրություն ենք դարձել դրանց կեպափոխությանը՝ կախված տվյալ ժամանակի հասարակական համատեքստից: Անդրադառնալով հետազոտության արդիականության հարցին, պետք է նշենք, որ սույն ատնեախոսությունն արդիական է մի շարք առումներով:

---

[1] Այս յուրահատկությունը որոշ առումներով նկատել է նաև Հենզել Մանուչարյանը. տե՛ս Մանուչարյան Հ., Հայ քաղաքական մտքի պատմություն, գիրք Ա, V-XVIII դդ., Եր., 2013, էջ 106:

[2] Մի քանի բացառություն են Վիրքը արաբական տիրապետությունից հետո, Հին Ռուսիան մոնղոլական տիրապետությունից հետո և Բուլղարիան բյուզանդական տիրապետությունից հետո:

[3] Ինչպես Լանգոբարդների, Խազարների պետությունները, Շադդադյան ամիրայությունը, Խաչակրաց պետությունները և այլն. տե՛ս Christie N., The Lombards, Oxford, Blackwell, 1998, էջ 102-108, 206-211: Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Եր., ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., 1976, էջ 478-482, 534: Новосельцев А. П., Хазарское государство и его роль в истории Восточной Европы и Кавказа, Москва, Наука, 1990, էջ 219-231:

[4] Թերևս ամենավառ օրինակները Սասանյան Իրանը և Արևմտյան Հռոմեական կայսրությունն են:

[5] Լավագույն օրինակներ են Ֆրանսիական թագավորությունը, Սրբազան Հռոմեական կայսրությունը, մեծ հաշվով՝ նաև Բյուզանդիան, քանզի այն կործանվեց միջնադարի վերին սահմանագծին՝ 1453 թ.:

Նախ այն շոշափում է գաղափարների պատմությանը և ի ցույց դնում, որ միջնադարյան հայ քաղաքակրթությունից մեզ հասած հարուստ մատենագրական ժառանգությունը թույլ է տալիս դարաշրջանի հայոց պատմության հարցերը լուսաբանել նաև այս ենթագիտակարգին հատուկ հարցադրումների դիտանկյունից: Բացի այդ՝ հետազոտությունն ունի արդիական նշանակություն միջնադարյան Հայաստանում պետականության պատմության ուսումնասիրության տեսանկյունից: Այս առումով պետք է առանձնակի ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքի վրա: Պետականության պատմության մեջ հաճախ պատշաճ ուշադրություն է դարձվում աշխարհաքաղաքական իրադրության և այլազան պետություններին սպառնացող արտաքին մարտահրավերների վրա: Սակայն կարևոր է նաև ուշադրություն դարձնել պետությունների ներքին կյանքում տեղի ունեցող զարգացումների վրա՝ նախ և առաջ պետությունների քաղտնտեսական կառուցվածքի և տիրապետող քաղաքական մտայնությունների վրա: Խնդրի այսպիսի դրվածքը կարող է շահեկան լինել ոչ միայն միջնադարյան շրջանի պետականության ուսումնասիրության տեսանկյունից, այլև կարող է իր կիրառությունը գտնել հետագա շրջանների Հայաստանի և Հայաստանին հարակից պետությունների պետականության վայրիվերումների ուսումնասիրության հարցում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել քաղաքական մտածողության առանձնահատկությունները XI դարի երկրորդ կեսի և XIII դարի Հայաստանում: Այդ նպատակի համար առանձնացվել և ուսումնասիրվել են հետազոտական հետևյալ խնդիրները՝

- Բազմակողմանի քննության առնել Բագրատունյաց թագավորության անկման պատճառները և իմաստավորումը միջնադարյան հայ մատենագրության մեջ:
- Ուսումնասիրել Կիլիկիայի Հայկական թագավորության և Զաքարյան իշխանապետության ստեղծման գաղափարական ակունքները և հասարակական-քաղաքական նախապայմանները:
- Քննել «հայ ազատագրական լեգենդ» պատմագիտական հասկացությունը հայկական պետականության համատեքստում՝ հատուկ ուշադրություն դարձնելով հայ միջնադարյան ողբերին, տեսիլներին և «թագավորության վերականգնման գաղափարին»:
- Բազմակողմանի քննության ենթարկել քաղաքական իշխանության ընկալումը միջնադարյան Հայաստանում՝ հատուկ ուշադրություն դարձնելով իշխանական տների ծագումնաբանական առասպելներին:
- Քննության առնել առանձնակի կարևորություն ունեցող քաղաքական մասնավոր գաղափարներ, ի թիվս այլոց, մարդկանց նախնական ազատության գաղափարները:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆԸ: Սույն աշխատանքում առաջին անգամ քննության են առնվում XI-XIII դարերի Հայաստանի քաղաքական գաղափարներն իրենց ամբողջության մեջ: Ի տարբերություն նախորդ ընդհանրացնող աշխատանքների՝ մենք չենք ծանրանում միայն անվանի գործիչների արտահայտած գաղափարների առանձին և իրարից անկախ քննության վրա[6]: Օգտագործելով քաղաքական մտածողության արտահայտություններ պարունակող բազում բնագրեր, համադրելով դրանք հարակից աղբյուրների հետ և քննելով

[6] Հմմ. Мирумян К. А. Армянская политическая мысль. Формирование и этапы развития, Ереван, Изд-во РАУ, 2021.

պատմական համատեքստը՝ մենք փորձել ենք ցույց տալ քաղաքական գաղափարների առաջացման նախադրյալները և պատմական զարգացումը: Արդյունքում մեզ հաջողվել է առանձնացնել հայ քաղաքական մտածողության համար առանցքային «թագավորության վերականգնման գաղափարը», ցույց տալ դրա առաջացումը և միաձուլումը «հայ ազատագրական լեգենդին», դրա ազդեցությունը հայության պետականակերտ ուժերի վրա: Առաջարկել ենք «ողբատեսիլային մտածողություն» հասկացությունը նկարագրելու համար քաղաքական մտածողության խիստ երկատված (դիխոտոմիկ) տատանումն անընդունելի ներկայի և փափագելի գեթ անորոշ ապագայի միջև: Համադրելով միջնադարյան նյութը արդի մարդաբանական տեսությունների հետ՝ փորձել ենք բացատրել հայ նախարարական տոհմերի ծագումնաբանական առասպելների առաջացման պատճառները: Բացի այդ՝ ցույց ենք տվել, որ Արիստակես Լաստիվերցուն զուգահեռ գոյություն է ունեցել XI դարի հայ պատմագրության մեկ այլ՝ Լաստիվերցուն ներհակ մի ուղղություն: Ցույց ենք տվել Բագրատունյաց Հայաստանի անկման և Կիլիկիայում պետության վերակերտման խորքային հասարակական և գաղափարական պաճառները: Բացահայտել ենք Ստեփանոս Օրբելյանի և Խաչատուր Կեչառեցու կողմից Մեծ Հայքում թագավորության վերականգնմանը միտված գաղափարական գործունեությունը: Քննել ենք իշխանավորի կատարելատիպը ժամանակաշրջանի հայ մատենագրության մեջ, վերլուծել ենք քաղաքական մտածողության դրսևորման առանձնահատկությունները վիմագիր արձանագրություններում և հիշատակարաններում: Բազմակողմանի քննության ենք ենթարկել Մխիթար Գոշի Դատաստանագրքում մարդկանց նախնական ազատության գաղափարը՝ ցույց տալով դրա արտահայտությունները ժամանակաշրջանի այլ մատենագիրների մոտ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ: Ուսումնասիրության նպատակից ելնելով՝ ընտրվել է այնպիսի մի ժամանակաշրջան, ուր ավելի սուր է արտահայտված պետականության անկման և վերականգնման գործընթացը մի կողմից, իսկ մյուս կողմից նոր թափ է առնում մատենագրական կյանքը՝ երևան բերելով ականավոր մի շարք հեղինակների: Ժամանակագրական վերին սահմանը պայմանավորված է երկրորդ հանգամանքով ևս: Եթե XIII դ. երկրորդ կեսին դեռ գործում են քաղաքական որոշակի մտածողություն ունեցող դեմքեր, ինչպիսիք են Հովհաննես Պլուզ Երզնկացին, Ստեփանոս Օրբելյանը և Վահրամ Ռաբունին, գրվում են պատմական ողբեր և տեսիլներ, գործուն է պատմագրությունը, XIV դարի առաջին տասնամյակներից նկատվում է ոչ միայն հայոց պետական միավորների (Կիլիկիա և Մեծ Հայքի իշխանություններ), այլև քաղաքական մտածողության սրընթաց անկում: Դրա առհավատչյան է պատմագրության կանգը XIV դարում: Այսպիսով՝ XIV դարը հայ քաղաքակրթության տեսանկյունից այն բաժանարար շրջանն է, որտեղ երևան են գալիս խորքային քաղաքակրթական անկման միտումներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն ատենախոսությունը շոշափում է մտավոր պատմության հարցեր, անկարելի է դրան հաղորդել նեղ տարածքային սահմաններ: Այս իրողությունը պայմանավորված է միջնադարյան Հայաստանի մտավոր կյանքի կազմակերպման առանձնահատկություններով: Բանն այն է, որ հայոց մտահոգևոր կյանքի մշակները գործում էին տարածական լայն ընդգրկման մեջ՝ Կիլիկիայից և Բյուզանդիայից մինչև Հայք և Վիրք: Բազում օրինակներից առավել ուշագրավ է Հովհաննես Երզնկացին, ով

նախ գործել է իր հայրենի վաճառաշատ քաղաքում, ապա գործունեություն է ծավալել Տփղիսում, Կիլիկիայում, Երուսաղեմում և այլուր:

Հաշվի առնելով այս առանձնահատկությունը՝ ատենախոսության համար ընդգրկել ենք տարածական լայն սահման, որ ներառում է գործընթացներ և զարգացումներ Բալկանյան թերակղզուց մինչև Միջին Արևելք և Կովկաս ընկած տարածքը: Հարկ է նշել, որ մտավոր շարժերն աշխարհագրական այս տիրույթներից մեզ են հասել խիստ անհամաչափ, ինչը և իր արտահայտումն է գտել ատենախոսության էջերում: Մյուս կողմից հարկ է նշել, որ այդ անհամաչափությունն ինքնին ցուցիչ է՝ այս կամ այն տարածքում գործընթացների խտությունը հասկանալու համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՔԸ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ: Արդի գիտական գրականության մեջ մտավոր պատմության երկու ճանաչված մեթոդաբանական դպրոց կա: Մեկը «Քեմբրիջի» դպրոցն է, մյուսը՝ «Բիելֆելդի»: Ծանոթանալով սույն դպրոցների հիմնական տեսաբանների աշխատանքներին[7], պարզեցինք, որ դրանք առանձնապես կիրառելի չեն դարաշրջանի հայ քաղաքական մտածողության ուսումնասիրության համար: Քննության համար հիմնականում օգտագործել ենք պատմագիտության և բանասիրության՝ արդեն դասական դարձած մեթոդները՝ պատմական և տեքստաբանական համեմատությունը, համաժամանակյա և տարաժամանակյա հետազոտությունը:

Քննության առարկա դարաշրջանի և առհասարակ միջնադարյան Հայաստանի քաղաքական գաղափարներին նվիրված երկու առանձին հետազոտություն կա՝ Կառլեն Միրումյանի և Հենզել Մանուչարյանի մենագրությունները, որտեղ վերլուծության են ենթարկված առանձին հեղինակների քաղաքական հայացքները[8]: Թեմայի քննության տեսանկյունից կենտրոնական կարևորություն ունի Աշոտ Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» կոթողային երկհատորյակի առաջին հատորը[9], որտեղ հեղինակը շատ հաճախ դիպուկ որսացել է գաղափարական զարգացումների և հասարակական փոփոխությունների նուրբ փոխհարաբերությունները: Չնայած այն հանգամանքին, որ հեղինակի հիմնական առարկան «հայ ազատագրական լեգենդ»-ն է, այնուամենայնիվ այս աշխատությունն ուղենիշային է հետագա յուրաքանչյուր հետազոտության համար՝ հաշվի առնելով դրա ընդարձակ աղբյուրագիտական ընդգրկումը

---

[7] Meaning and Context: Quentin Skinner and his Critics, ed. J. Tully, Princeton NJ, 1988: Skinner Q., Visions of Politics, vol. 1, Regarding Method, Cambridge, Cambridge University Press, 2002: Koselleck, R. The Temporalisation of Concepts, “Finnish Yearbook of Political Thought”, 1, 1997, pp. 16-24: Նույնի, Introduction and Prefaces to the *Geschichtliche Grundbegriffe*, “Contributions to the History of Concepts”, 6, 2011, pp. 1-37: Նույնի, Begriffsgeschichte and Social History, “Economy and Society”, 11, 1982, pp. 409-42. Նույնի, Social History and Conceptual History, “International Journal of Politics, Culture, and Society”, 2, 1989, pp. 308-325: Կան նաև այլ հետազոտողներ, սակայն միայն այս երկու դպրոցներն են առաջարկել կազմակերպված մեթոդաբանություն. տե՛ս նաև Müller J.-W., European Intellectual History as Contemporary History, “Journal of Contemporary History”, 46, 2011, էջ 574-590: Palti E. J., The “Theoretical Revolution” In Intellectual History: From The History of Political Ideas to The History of Political Languages, “History and Theory”, 53, 2014, էջ 387-405:

[8] Մանուչարյան Հ., նշվ. աշխ.: Мирумян К. А., նշվ. աշխ.:

[9] Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1957:

և հարցադրումների ու տեսակետների լայն հորիզոնը։ Աշխատության էջերում Հովհաննիսյանը հարևանցի անդրադառնում է մի շարք խիստ կարևոր հարցերի, ինչպիսիք են Բագրատունյաց պետության էությունը, հայերի բյուզանդական կողմնորոշումը, վրաց թագավորության հիմքի վրա համակովկասյան պետության հիմնումը. առանձին քննության է ենթարկում Մխիթար Գոշի, Ստեփանոս Օրբելյանի, Վարդան Այգեկցու և Ֆրիկի քաղաքական հայացքները։

Առանձնակի կարևորություն ունի Կարեն Յուզբաշյանի՝ Բյուզանդիային և Բագրատունյաց Հայաստանին նվիրված մենագրության համապատասխան գլուխը[10], որտեղ կարևոր դիտարկումներ կան հայոց թագավորության վերականգնման քաղաքական գաղափարի շուրջ։

Դարաշրջանի քաղաքական գաղափարների վերաբերյալ մասնավոր հարցերի լուսաբանման համար օգտվել ենք նաև այլ մենագրություններից և հոդվածներից։ Դրանց թվում պետք է նշել Լևոն Տեր-Պետրոսյանի «Խաչակիրները և հայերը» երկհատոր աշխատության երկրորդ հատորը։ Թեպետ այս աշխատությունը քանիցս հղված է ատենախոսության այլևայլ մասերում, սակայն ատենախոսության բուն խնդիրների և քննվող հարցերի վերլուծության տեսանկյունից առավել կարևոր է հեղինակի անդրադարձը Ռուբինյանների քաղաքական իրավականացման հարցին[11]։ Ազատ Բոզոյանի հոդվածներից մեկում թեմայի քննության տեսանկյունից ուշագրավ անդրադարձ է կատարվում Արշակունիների պատկերման խնդրին հայ մատենագրության մեջ[12]։ Քննության առարկա հարցերի լուսաբանմանը օժանդակել է Ալեքսան Հակոբյանի ծավալուն մենագրության մեջ կարևոր անդրադարձը Մովսես Դասխուրանցու քաղաքական կողմնորոշման հարցին[13], ինչպես նաև Պետրոս Հովհաննիսյանի հոդվածը նվիրված X դարի հայ պատմագրության մեջ քաղաքական կողմնորոշումների արտահայտման խնդրին[14]։

Ինչպես նշեցինք, ժամանակաշրջանի քաղաքական մտածողությունը հետազոտելու համար վերցրել ենք ընդլայնված աղբյուրագիտական հենք։ Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ քաղաքական մտածողության մասնիկներ նշմարելի են այլազան աղբյուրներում։ Քննության են ենթարկվել XI-XIII դդ. մի շարք հեղինակների՝ Գրիգոր Մագիստրոսի թղթերը[15], Արիստակես Լաստիվերցու պատմական երկը[16], Պողոս

---

[10] Юзбашян К. Н., Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., Москва, «Наука», 1988.

[11] Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, Երևան, 2007, էջ 202-203։

[12] Bozoyan A., The Depiction of the Arsacid Dynasty in Medieval Armenian Historiography. The Good Christian Ruler in the First Millennium, ed. Forness P. M., Hasse-Ungeheuer A., Leppin H., Berlin/Boston, De Gruyter, 2021, pp. 205-220.

[13] Յակոբեան Ա., Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղվանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում Անտիկից մինչև ԺԳ դար, Եր., «Գիտություն» հրատ., 2020, էջ 224-225։

[14] Հովհաննիսյան Պ., Երկու ուղղություն X դարի հայ պատմագրության մեջ, «Հայագիտության հարցեր», 2014, 2, էջ 108-120։

[15] Գրիգոր Մագիստրոս, Թուղթք և չափաբերականք, աշխ. Գ. Մուրադեանի, ՄՀ, հ. ԺԵ, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 139-386։

[16] Արիստակէս Լաստիվերցի, Պատմութիւն, աշխ. Գ Մանուկեանի, ՄՀ, հ. ԺԵ, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 525-633 (այսուհետև՝ Լաստիվերցի)։

Տարոնացու դավանաբանական աշխատությունը[17], Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրական երկը[18], Սարգիս Շնորհալու մեկնությունը[19], Հովհաննես Սարկավագի քահանայության վերաբերյալ աշխատությունը[20], Դավիթ Ալավկաորդու իրավական աշխատությունը[21], Ներսես Շնորհալու այլազան երկեր[22], Սամուել Անեցու ժամանակագրական աշխատությունը[23], Մխիթար Անեցու կորուսյալ պատմական երկի մեզ հասած հատվածը[24], Մխիթար Գոշի մի շարք երկեր[25], Գրիգոր Տուտեորդու թուղթը[26], Ներսես Լամբրոնացու զանազան երկասիրություններ[27], Գրիգոր Տղայի չափածո երկերը[28], Վարդան

---

[17] Պօղոս Տարօնացի, Թուղթ ընդ դէմ Թէոփիստեայ, աշխ. Գ. Ալավերդեանի, ՄՀ, հ. ԺԷ, Եր., ԵՊՀ հրատ., 2016, էջ 298-563:

[18] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, աշխ. Մ. Մէլիք-Ադամեանի, Ն. Տէր-Միքայէլեանի և Հ. Բարթիկյանի, Եր., ԵՊՀ հրատ., 1991 (այսուհետև՝ Ուռհայեցի):

[19] Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն եօթանց թղթոց կաթուղիկեայց, աշխ. Ա. վրդ. Նարինեանի, Կ. Պոլիս, 1826:

[20] Յովհաննու Սարկավագի, Յաղագս քահանայութեան, (Սոփերք հայկականք Գ), Վենետիկ, տպ. Մխիթարեանց, 1853:

[21] Դաւիթ Ալաւկա որդի, Կանոնական աւրէնսդրութիւն, աշխ. Ա. Աբրահամեանի, ՄՀ, հ. ԺԵ, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 679-726:

[22] Ներսէս Շնորհալի, Վիպասանութիւն, աշխ. Մ. Մկրտչյանի, Եր., ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., 1981: Նույնի, Ողբ Եդեսիոյ, աշխ. Մ. Մկրտչյան, Եր., ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., 1973: Նույնի, Յիսուս Որդի, աշխ. Գ. Գասպարեանի, ՄՀ, հ. ԻԱ, Եր., Մատենադարանի հրատ., 2018, էջ 291-455: Նույնի, Թղթեր, աշխ. Ա. Բոզոյեանի, ՄՀ, հ. ԻԲ, Եր., Մատենադարանի հրատ., 2022, էջ 39-266: Նույնի, Պատասխանի թղթոյն մեծի թագաւորին Հոռոմոց..., աշխ. Ա. Բոզոյեանի, ՄՀ, հ. ԻԲ, Եր., Մատենադարանի հրատ., 2022, էջ 357-365:

[23] Սամուել Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն, աշխ. Կ. Մաթևոսյանի, Եր., «Նաիրի» հրատ., 2014 (այսուհետև՝ Սամուել Անեցի):

[24] Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխ. Հ.Գ. Մարգարյանի, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983 (այսուհետև՝ Մխիթար Անեցի):

[25] Մխիթար Գոշ, Առակներ, աշխ. Է. Պիվազյանի, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ, 1951: Նույնի, Թուղթ առ Վրացիսն, Պ. Մուրադյան, ԺԱ-ԺԳ. դարերի հայ-վրացական դավանական խնդիրները և Մխիթար Գոշի «Առ Վրացիսն» թուղթը, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 2011, էջ 196-266: Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, ՄՀ, հ. ԺԹ, աշխ. Վ. Բաստամեանցի, Խ. Թորոսեանի, Գ. Գասպարեանի և Ա. Բոզոյեանի, Եր., Մատենադարանի հրատ., 2014: Նույնի, Վկայութիւն Խոսրովու Գանձակեցւոյ, ՄՀ, հ. Ի, աշխ. Յ. Մանանդեանի և Հ. Աճառեանի, Եր., Մատենադարանի հրատ., 2014, էջ 577-584: Նույնի, Ժամանակագրութիւն, ՄՀ, հ. Ի, Եր., Մատենադարանի հրատ., 2014, էջ 605-612:

[26] Գրիգոր Տուտեորդու թուղթը Գրիգոր Տղային, Ա. Տէր-Միքէլեան, Միջին դարերի կաթուղիկոսների ձգտումներն եկեղեցական խաղաղութեան համար, Արարատ, 1893, Դ, էջ 321-350:

[27] Ներսէս Լամբրոնացի, Ատենաբանութիւն Եւ թուղթ Եւ ճառք, Վենետիկ, Ս. Ղազար, 1865, էջ 95-326: Նույնի, Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ եւ Մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վենետիկ, Ս. Ղազար, 1847: Նույնի, Թուղթ առ Հուսիկ, Խորհրդածութիւն սրբազան պատարագի, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակովբեանց, 1842, էջ 21-27 (հավելված): Նույնի, Հարցաքննութիւն առ օրէնս Քրիստոսի, Խորհրդածութիւն սրբազան պատարագի, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակովբեանց, 1842, էջ 1-8 (հավելված): Նույնի, Վերստին հաստատութիւն ոչ ժառանգեցուցանելոյ ազգատոհմի զառաջնորդական պատիւ, Խորհրդածութիւն սրբազան պատարագի, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակովբեանց, 1842, էջ 9-14 (հավելված):

[28] Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, աշխ. Ա. Մնացականյանի, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972:

Այգեկցու դավանական բնույթի երկերը և առակները[29], Կիրակոս Գանձակեցու պատմական երկը[30], Վարդան Արևելցու մի շարք երկեր[31], Գրիգոր Ակներցու պատմական երկասիրությունը[32], Կոստանդին Բարձրբերդցու թուղթը[33], Սմբատ Սպարապետի պատմական և իրավական երկերը[34], Վահրամ Ռաբունու չափածո պատմական գրվածքը[35], Հովհաննես Երզնկացու տարաբնույթ աշխատություններ[36], Ֆրիկի բանաստեղծական «դիվանը»[37], Խաչատուր Կեչառեցու տարատեսակ երկեր[38], Ստեփանոս Օրբելյանի պատմական և դավանաբանական աշխատությունները, ինչպես նաև «Ողբը»[39] և ուրիշների երկերը[40]: Քննության առարկա են դարձել նաև անվավեր շարադրանքներ և տեսիլներ,

---

[29] Մառ Ն., Ժողովածոյք առակաց Վարդանայ, Ս. Պետերբուրգ, տպ. Ի.Ն. Սկորոխոդով, 1894: Վարդան Այգեկցի, Խրատք առ Պաղտին իշխան, ՄՄ 1880, թ. 116ա-187ա: Նույնի, Խնդիրք եւ հարցումն Տեառն Միքայէլի Անտիոքու եպիսկոպոսին, ՄՄ 770, թ. 174ա-245բ:

[30] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., ԳԱ հրատ., 1961 (այսուհետև՝ Գանձակեցի):

[31] Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, աշխ. Հ. Պերպերյանի, Փարիզ, «Արաքս» տպ., 1960: Վարդան վարդապետ [Արևելցի], Հաւաքումն պատմութեան, աշխ. Ղ. Ալիշանի, Վենետիկ, Ս. Ղազար, 1862 (այսուհետև՝ Վարդան Արևելցի, Պատմություն): Նույնի, Ժղլանք, ՄՄ, 750, թ. 1ա-76բ, Նույնի, Մեկնութիւն Հնգամատենի, ՄՄ, 7452, թ. 1ա-295ա, ՄՄ 1135, թ. 3ա-223բ: Վարդան Արևելցի, Հովհաննես Ծորձորեցի, Թովմա Մեծոփեցի, Մեկնութիւնք Դանիէլի մարգարեութեան, աշխ. Հ. Քյոսեյանի և Մ. Արաբյանի, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 2007:

[32] Գրիգոր վրդ. Ակներցի, Պատմութիւն թաթարաց, աշխ. Ն. Պողարեանի, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1974 (այսուհետև՝ Ակներցի):

[33] Խաչիկյան Լ., Կոստանդին Բարձրբերդցու խրատական թուղթը, Երկեր, հ. Ա, Եր., «Նաիրի» հրատ., 2012, էջ 217-223:

[34] Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, աշխ. Կ. Շահնազարեանցի, Փարիզ, 1859 (այսուհետև՝ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք): Смбат Спарапет, Судебник, сост. А. Галстян, Ереван, Айпетрат, 1958:

[35] Վահրամ վարդապետ [Ռաբունի], Բան ի յայտնութեան Տեառն եւ յօծումն Լեւոն Գ արքայի, Յերուսաղէմ, Ս. Յակոբեանց տպ., 1875: Վահրամ Ռաբունի, Ոտանաւոր պատմութիւն Ռուբինեանց, աշխ.՝ Կ. վրդ. Շահնազարեանցի, Փարիզ, 1859:

[36] Սրապյան Ա., Հովհաննես Երզնկացի, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958: Բաղդասարյան Է., Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977: Հովհաննես Երզնկացի, Մատենագրութիւն, հ. Ա, աշխ. Ա. Երզնկացի-Տեր-Սրապյանի և Է. Բաղդասարյանի, «Նաիրի» հրատ., Եր., 2013: Պատմութիւն յայտնութեան նշխարաց սրբոյն Ներսիսի (Սովերք հայկականք Է), Վենետիկ, տպ. Մխիթարեան, 1853, էջ 31-78:

[37] Ֆրիկ, Դիւան, աշխ. Տիրայր արք., Նիւ Եորք, 1954:

[38] Ավդալբեգյան Մ., Խաչատուր Կեչառեցի, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958:

[39] Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի, Պատմութիւն Տանն Սիսական, աշխ. Մ. Էմինի, Մոսկվա, 1861 (այսուհետև՝ Օրբելյան, Պատմություն): Ստեփաննոս Օրպէլեանի Ողբ ի Ս. Կաթուղիկէն, աշխ. Կ. Կոստանեանցի, Թիֆլիս, 1885 (այսուհետև՝ Օրբելյան, Ողբ): Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց Հակաճառութիւն ընդդեմ երկաբնակաց, Կ. Պոլիս, 1756 (այսուհետև՝ Օրբելյան, Հակաճառություն):

[40] Զանց են առնվել միայն զուտ կրոնական նշանակության երկերը, ինչպիսիք են օրինակ շարականները կամ այն երկերը, որոնց հպանցիկ ծանոթությունը չի նշմարել քաղաքական գաղափարների արտահայտում: Ամեն դեպքում՝ քննության առարկա շրջանի մատենագրությունը դեռևս ամբողջությամբ ուսումնասիրված չէ: Բավական է նշել, որ վերջին տարիներին ի հայտ են եկել վախճանաբանական բնույթի երկու կարևոր գործ Ներսես Շնորհալու և Դավիթ Քոբայրեցու ժառանգությունից. տե՛ս Քյոսեյան Հ., Նորահայտ էջեր Դավիթ Քոբայրեցու մատենագրական

ինչպիսիք են «Դաշանց Թուղթ»-ը[41], Ներսես Մեծի[42], Հովհաննես Կոզեռնի[43], Ագաթոնի[44], Բյուզանդահայի[45], Կեղծ-Մեթոդիոսի[46] տեսիլները: Ատենախոսության աղբյուրագիտական հիմքն ամբողջացնում են քննվող դարաշրջանի հիշտակարանները և վիմագրերը, ինչպես նաև հայ միջնադարյան թարգմանական մատենագրության նմուշները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության հիմնական բովանդակությունը հրապարակվել է հեղինակի յոթ հոդվածներում: Ատենախոսության դրույթները ներկայացվել են հանրապետական և միջազգային մի շարք գիտաժողովներում (Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան, ԵՊՀ, ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ): Ատենախոսությունը քննարկվել, դրական եզրակացության և երաշխավորության է արժանացել ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի կողմից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Ատենախոսության համակարգչային շարվածքի ընդհանուր ծավալը 209 էջ է:

Ներածության մեջ ներկայացված են ատենախոսության թեմայի արդիականությունը, ուսումնասիրության նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, տարածաժամանակային ընդգրկումն, մեթոդական և աղբյուրագիտական հիմքերը:

Ատենախոսության **առաջին գլուխը՝** «Քաղաքական գաղափարների զարգացման պատմահասարակական միջավայրը և մատենագրական դրսևորումները» վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջին ենթագլխում իբրև մեկնակետ ընդունվել է «XI դարի ճգնաժամ» հայեցակարգը, համաձայն որի XI դարում հայոց թագավորական և իշխանական տների անկումը սկզբունքորեն տարբերվում է V դարում Հայոց թագավորության անկումից: Սկզբունքային տարբերության հիմք է հանդիսանում հետևյալ հանգամանքը. V դարում լոկ թագավորի քաղաքական հաստատությունն է վերանում, իսկ XI դարում թագավորի քաղաքական հաստատությանը զուգահեռ անկում են ապրում նախարարական տների մեծ մասը, տեղի է ունենում կաթողիկոսական աթոռի մասնատում, ժողովրդի նշանակալի մի մասը զոհ է գնում

ժառանգությունից, «ԲՄ», 32, 2021, էջ 363-341: Ներսէս Շնորհալի, Ի հանդերձեալ զալուստն Քրիստոսի, աշխ. Հ. Իրիցյանի, ՄՀ, հ. ԻԲ, Եր., Մատենադարանի հրատ., 2022, էջ 671-685:

[41] Դաշանց թուղթ, Pogossian Z., The Letter of Love and Concord: A Revised Diplomatic Edition, Brill, Leiden/Boston, pp. 330-417:

[42] Ներսես Մեծի տեսիլ, Մեսրոպ Վայոցձորեցի, Պատմութիւն սրբոյն Ներսիսի հայոց հայրապետի, ՄՀ, հ. ԺԱ., աշխ. Գ. Տէր-Վարդանեանի, Անթիլիաս, 2010, էջ 719-727:

[43] Անկախ կամ «բյուզանդամետ» տարբերակը՝ Марр Н. Я., Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне, «Восточные заметки», 1895, с. 9-34: Ուռհայեցու կամ «լատինամետ» տարբերակի բնագիրը տե՛ս՝ Second Prophecy of Yovhannes Kozern, Andrews T. L. 2017, Matt ʿēos Urhayec ʿi and His Chronicle: History as Apocalypse in a Crossroads of Cultures, Leiden/Boston, Brill, էջ 188-211:

[44] Այս տեսիլը հայտնի է մի քանի տարբերակներով. Աւգեր Յ., Ագաթոն կամ Ագաղրոն, Բազմավէպ, 1913, 9-10, էջ 396-400: Պողարեան Ն., Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 9, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1979, էջ 467-470 և այլն:

[45] Թոփչյան Ա., Կեղծ-Մեթոդիոսի «Հայտնության» հին հայերեն թարգմանությունը, «ԲՄ», հ. 23, 2016, էջ 368-375:

[46] Նույն տեղում, էջ 330-378:

կոտորածների կամ բռնում գաղթականի ճանապարհը: Հաջորդիվ, քննության են առնվում այս ճգնաժամի ներքին (Բագրատունյաց Հայաստանի քաղաքական համակարգի անկատարություն) և արտաքին պատճառները (կայսերապաշտ հարևանների առկայություն): Այս ենթախորքի վրա վերլուծության է ենթարկվում Բագրատունյաց Հայաստանի անկման իմաստավորման հարցը: Առանձնացվում է երկու հակադիր պատմագրական միտում՝ առաջինն արտահայտվում է Արիստակես Լաստիվերցու երկում, իսկ մյուսը, ըստ երևույթին, ծագում է Հովհաննես Կոզեռնի պատմական երկից:

Երկրորդ ենթագլխում համակողմանի ուսումնասիրության առարկա է դառնում XI դարի ճգնաժամին հայ վերնախավի արձագանքելու պայմանատեսակները: Քննության է ենթարկվում իրադրությունը Տաշիր-Զորագետում, Սյունիքում, Խաչենում, Սասունում և այլուր: Սույն ենթագլխում առանձնակի ուշադրություն է դարձվում նաև Կիլիկյան Հայաստանի ստեղծման պատճառների վրա: Մասնավորապես քննադատության է ենթարկվել որոշակի տարածում ստացած «ժողովրդագրական» տեսությունը, համաձայն որի՝ հայկական պետության առաջացումը Կիլիկիայում հայերի գաղթի ուղիղ հետևանք էր: Ի տարբերություն այս մոտեցման՝ ատենախոսության սույն ենթագլխում առաջարկվում է ուշադրություն դարձնել ժողովրդագրական գործընթացներին զուգահեռ տեղի ունեցած այլ իրողությունների վրա: Մասնավորպես ցույց է տրվում հայ ավատական վերնախավի մոտ տեղի է ունենում քաղաքական վարքի փոփոխությունը:

Երրորդ ենթագլխում քննության են առնված միջնադարյան հայ քաղաքական մտածողությունն ուղենշող «ողբատեսիլային մտածողությունն» և «թագավորության վերականգնման գաղափարը»: Այս երկու իրողությունների գաղափարական ակունքները գալիս են հայկական միջավայրում Արշակունյաց թագավորության անկման իմաստավորումից: Արշակունյաց անկումն Խորենացին մեկնաբանում է իբրև համընդհանուր աղետ, ինչը և երանգավորում է «ողբային մտածողությունն» առհասարակ: Ողբային քաղաքական մտածողության մեջ աղետը հաղթում է հասարակությանը, և մնում է միայն արձանագրել ներկա քաղաքական դրության խիստ բացասական էությունը: «Տեսիլային մտածողության» ակունքները գալիս են Ներսես Մեծին և Սահակ Պարթևին վերագրվող զուշակություններից և տեսիլներից: Այստեղ Արշակունյաց անկումն իմաստավորվում է անցյալի ներկայի և ապագայի բարդ հարաբերության մեջ: Ներկա քաղաքական աղետը ներկայացվում է իբրև անցյալում արված քաղաքական մարգարեության իրագործում՝ անցյալում կանխատեսված իրողությունների իրականացում ապագայում: Հետևաբար ներկայի քաղաքական խնդիրների լուծումն էլ վերապահվում է անորոշ և մարգարեական ապագային: «Թագավորության վերականգնման գաղափարը» առաջ է գալիս Արշակունյաց անկումից հետո նախարարական տների այլազան ներկայացուցիչների ձգտումներում հաստատվելու իբրև հայոց թագավոր: Այս գաղափարը կարմիր թելով անցնում է հայ մատենագրության էջերով և կարևորագույն դեր է ունեցել պետականության անկումներից հետո դրա վերականգնման գործում:

Ատենախոսության **երկրորդ գլուխը** «XI-XIII դարերի առանցքային քաղաքական գաղափարների քննություն» վերտառությամբ բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջին ենթագլխում քննության են առնված հայ ավատական տների ծագումնաբանական առասպելները: Բազմակողմանի քննության են ենթարկվել Բագրատունիների, Արծրունիների, Մամիկոնյանների, Ռուբինյանների, Պահլավունիների և այլ տների

ծագման մասին ավանդված տեղեկությունները։ Առանձին ուշադրություն է դարձվում Պահլավունիների և Ռուբինյանների միջև քաղաքական մրցակցության հարցին։ Այս համատեքստում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Օրբելյանների ծագման առասպելը՝ վկայված Ստեփանոս Օրբելյանի պատմական երկում։ Այս առասպելի յուրահատկությունները բացատրվում են վերջինիս քաղաքական ծրագրի յուրահատկություններով, որը հիմք էր ստեղծում Մեծ Հայքում Հայոց թագավորության վերականգնման համար։

Երկրորդ ենթագլխում հանգամանալից քննության են առնվում իշխանավորի կատարելատիպին և ժամանակի քաղաքական զգացմանը վերաբերող հարցերը։ Իշխանավորի կատարելատիպ հասկացության տակ նկատի ենք առնում քննության առարկա դարաշրջանի հայ մատենագիրների պատկերացումներն առ այն, թե ինչպիսին պետք է լինի լավ իշխանավորը։ Այս հարցն ուսումնասիրելու համար քննվել են մի քանի տասնյակ տարաբնույթ մատենագրական հաղորդումներ, ուր վկայակոչվում են իշխանավորի առաքինությունները։ Ժամանակի քաղաքական զգացում ասելով՝ նկատի ունենք հիշատակարանների և վիմագրերի ժամանակային կաղապարը (*ի թագաւորութեան, յաշխարհակալութեան* և այլն)։ Այս հարցի լուսաբանման համար քննվել են հարյուրավոր վիմագրեր և հիշատակարաններ, և ներկայացվել է մանրամասն համադրական վերլուծություն։

Երկրորդ ենթագլխում հետազոտվել է Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» տեղ գտած մարդկանց նախնական ազատության գաղափարը, երբ Գոշը պնդում է, որ Աստված մարդկանց ստեղծել է ազատ, և նրանք ծառայում են իրենց տերերին՝ բացառապես տնտեսական պատճառներից ելնելով։ Մանրազննին աղբյուրագիտական քննության արդյունքում ցույց են տրվել սույն գաղափարի ակունքները (Ծննդոց Գիրք և Սաղմոսներ), դրա արտահայտումները հայ թարգմանական մատենագրության մեջ (Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նյուսացի և այլն), ապա նկատի է առնվել, որ Գոշի ընկալումը հիմնարար կերպով տարբերվում է Ծննդոց Գրքում արտահայտված գաղափարի մեկնաբանության ավանդույթից։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ Ատենախոսության հիմնական եզրակացությունները հանգում են հետևյալին.

1. Բագրատունյաց Հայաստանի անկումը չի կարելի բացատրել սոսկ աշխարհա-քաղաքական պատճառներով։ Բյուզանդական կայսերապաշտությունը և սելջուկյան ասպատակությունները, իրենց կործանարարությամբ հանդերձ, սոսկ արտաքին պատճառներ էին։ Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքի անկատա-րությունը (ռազմաքաղաքական կենտրոնացվածության ցածր մակարդակ, սեփական դրամի բացակայություն, բանակի ավատատիրական բնույթ) դարձնում էին այն խիստ խոցելի արտաքին մարտահրավերների նկատմամբ։ Գաղափարական դաշտի բացերը (նախարարական մասնավոր շահերի առաջնայնություն, պետականաշինական ձեռնարկների սակավ և թույլ բնույթ) էլ ավելի էին բարդացնում դրությունը։ Այսպիսով՝ ինքնամասնատման երկար տասնամյակներից հետո Բագրատունյաց Հայաստանը վերջնականապես կորցրեց արտաքին մարտահրավերներին դիմակայելու ունակությունը։

2. Բագրատունյաց Հայաստանի անկումը և հետմանազկերտյան շրջանի քաոսը բերեցին հայության համապարփակ անկման՝ XI դարի ճնգաժամի։ Ի տարբերություն

Արշակունյաց թագավորության անկման, երբ հասարակական հաստատությունները կանգուն մնացին, Բագրատունյաց անկումը հանգեցրեց ոչ միայն թագավորական իշխանության փոշիացման, այլև իշխանական տների հողերի կորստյան և ժողովրդի տարերային գաղթի ալիքների։ Այս դարակազմիկ աղետն իր արտահայտությունները գտավ մատենագրության մեջ՝ Արիստակես Լաստիվերցին քաղաքական վերնախավից մեղքի բաժինը դնում էր Վեստ Սարգսի և Պետրոս Գետադարձի վրա։ Մատենագրության մանրակրկիտ քննությունը թույլ տվեց եզրակացնել, որ Լաստիվերցին հակադրվում էր մերձգետադարձյան քաղաքական շրջանակներին, որ փորձում էին մեղքը դնել Գագիկ Բ-ի ուսերին՝ մաքրագործելով «հրաշագործ» հայրապետին։

3. XI դարի ճգնաժամն իր արտահայտումը գտավ նաև հայության տարբեր շերտերի քաղաքական կողմնորոշման հարցում։ Ճգնաժամին առերեսվելու առաջին պայմանատեսակը նոր հողերի յուրացումն էր։ Այսպիսի մոտեցում որդեգրեցին Կիլիկիայի իշխանները, ինչը հանգեցրեց Կիլիկիայում հայկական պետականության ստեղծման։ Այս գործընթացն ավանդաբար բացատրվել է սոսկ ժողովրդագրական տեղաշարժերի հիման վրա, սակայն քննությունը ցույց է տալիս, որ կարևորագույն դեր են ունեցել հայկական վերնախավի դիրքավորումը (հայ տիրակալների անկարողությունը Բյուզանդիայից ստանալ փոխհատուցում սեփական տարածքների դիմաց) և գաղափարական զարգացումները (թագավորության վերականգնման գաղափարը)։ Հաջորդ պայմանատեսակը բնորոշ էր XI դ. ճգնաժամը հաղթահարած պետական միավորներին (Սյունիքի թագավորություն, Կյուրիկյան թագավորություն, Խաչենի իշխանություն, Սասունի իշխանություն)։ Այստեղ նկատվում է իրերի դրությունը պահպանելու մղում։ Այս պայմանատեսակը ձախողվում է՝ բացառությամբ Խաչենի։ Երրորդ պայմանատեսակը հայության քաղաքական կյանքի ապահովումն է եկեղեցու միջոցով։ Հյուսիսային Հայաստանի այս պայմանատեսակի առաջամարտիկներ էին Հաղպատ-Սանահինի վարդապետները, իսկ Վասպուրականում՝ Աղթամարի կաթողիկոսները։ Չորրորդ պայմանատեսակը քաղաքական կյանքից լիակատար հրաժարումն էր, որ բնորոշ էր Փոքր Ասիայի և Հայաստանի բյուզանդական մասի մի շարք շրջանների հայությանը։

4. Աշոտ Հովհաննիսյանի կողմից շրջանառության մեջ դրված «հայ ազատագրական լեգենդ» հասկացության համաձայն Արշակունյաց անկումից հետո հայկական միջավայրում զարգանում է մի առասպել, համաձայն որի՝ հայոց թագավորությունը ունենալու է առասպելական ազատագրիչներ՝ հիմնականում «ֆրանկներ», մերթ նաև այլ ազգեր։ Աղբյուրների մանրակրկիտ քննությունը թույլ է տալիս փաստել, որ հայ մտածողության այսօրինակ վերլուծությունը խիստ միակողմանի է և պակասավոր։ Արշակունյաց անկումն իմաստավորվում է երեք՝ իրարից անկախ կերպով, որոնք մենք պայմանականորեն անվանում ենք ողբային մտածողության, տեսիլային մտածողության և թագավորության վերականգնման գաղափար։ Սրանք թագավորության անկման ողբերգական իրողությանն առերեսվելու երեք տարբեր ձևեր էին։ Ժամանակի ընթացքում իմաստավորման այս եղանակները միավորվում են՝ առաջ քաշելով ողբատեսիլային մտածողություն, որն իր հերթին միավորվում է թագավորության վերականգնման գաղափարի հետ։ Հայ ազատագրական լեգենդը ծնվում է միմիայն Բագրատունյաց թագավորության անկումից հետո և որոշ ժամանակ գոյություն է ունենում թագավորության վերականգնման գաղափարից անկախ։ Այլ կերպ ասած՝ հայության մեջ միշտ չէ, որ

տիրապետող է եղել լոկ օտար ուժերի օգնությամբ սեփական թագավորությունը վերկերտելու գաղափարը։ Թագավորության վերականգնման գաղափարը կարևոր ազդեցություն է ունեցել թե՛ Բագրատունյաց Հայաստանի, թե՛ Կիլիկյան հայկական թագավորության, թե՛ Զաքարյան իշխանապետության հիմնադրման գործում։ Միայն այս գաղափարի լույսի ներքո է կարելի բացատրել Ռուբինյանների և Զաքարյանների համառ մղումը՝ վերստեղծելու հայոց տապալված քաղաքական հաստատությունները։ Եթե Ռուբինյանների դեպքում գործ ունենք թագավորության թե՛ իրավական, թե՛ փաստական վերականգնման հետ, ապա Զաքարյանների դեպքում խոսքը միայն թագավորության փաստական վերականգնման մասին է։ Բանն այն է, որ Զաքարյանները միշտ պահպանել են իրենց իրավական կախվածությունը Վրաց թագավորից և գործնական քայլեր չեն ձեռնարկել՝ ստեղծելու Վրաստանից դուրս առանձին Հայոց թագավորություն։ Սակայն իրենց շուրջ նրանք ստեղծել են Բագրատունյաց արքայատան գաղափարախությանը հետևող գաղափարախոսություն (Բագրատունյաց ծագում, տիտղոսներ և այլն) և Հայաստանի տարածքի՝ իրենց ենթակա մասում ստեղծել են անձնապես իրենց ենթակա հայկական իշխանական տներ։ Այս գործընթացի գաղափարական մասում իր դերն է ունեցել նաև Մխիթար Գոշը։

5. Դարաշրջանի նորելուկ իշխանական տները հաճախ ձգտել են ներկայանալ իբրև հին ու նշանավոր տոհմերի շառավիղներ։ Պահլավունիները համարում էին իրենց Լուսավորչի տան և Արշակունիների ժառանգ, Թոռնիկյանները՝ Արշակունի, Մամիկոնյան և Արծրունի, Գող Վասիլը և Տղա Վասիլը՝ Կամսարական, Ռուբինյանները՝ հիմնականում Բագրատունի, երբեմն՝ Արծրունի, և այլն։ Սրան զուգահեռ հաճախ նկատելի էին հղումներ Բագրատունիների Դավթյան, Արծրունիների՝ Սենեքերիմյան և Մամիկոնյանների՝ Ճենբակուրյան ծագման առասպելներին։ Քննության արդյունքում պարզ է դառնում, որ այս առասպելները կապված էին Արշակունյաց անկմանը հաջորդող իրադրության հետ։ Քանզի Արշակունիները պարթևական ծագում ունեին, հայկական միջավայրում թագավորական հաստատությունը վերապահված էր օտար և փառապանծ ծագում ունեցող մի տոհմի։ Հետևաբար, թագավորության անկումից հետո Արշակունիների տեղին հավակնող իշխանական տների համար հարկավոր էր նմանատիպ օտար և փառապանծ ծագումնաբանական առասպելներ հյուսել։ Վաղ միջնադարից եկած այս առասպելները հասան մինչև քննության առարկա ժամանակաշրջան։ Օտար և փառապանծ ծագման առասպելը յուրովի օգտագործել է Ստեփանոս Օրբելյանը՝ հարմարեցնելով այն իր և Խաչատուր Կեչառեցու քաղաքական օրակարգին՝ Մեծ Հայքում թագավորության վերականգնմանը։

6. Հայ մատենագիրների աշխատանքների ուսումնասիրության արդյունքում կարելի է առանձնացնել իշխանավորի կատարելատիպն ամբողջացնող չորս հատկանիշ՝ հայ եկեղեցու և դավանանքի նկատմամբ եկեղեցասեր վերաբերմունք, քրիստոնեական առաքինություններին համապատասխան կենսակերպ, քաջություն և մարտական առաքինություններ, և վերջապես՝ խաղաղարարություն։ Այս հատկանիշների բացակայությունը հաճախ հիմք էր մատենագիրների կողմից բացասական վերաբերմունքի տվյալ տիրակալի նկատմամբ։ Պետք է նշել, որ այս կատարելատիպն ուներ հասարակական լուրջ հիմքեր. այն արտահայտում է մտահոգևոր վերնախավի սպասումները ռազմաքաղաքական վերնախավից։

7. Ուշադիր քննության առնելով հիշատակարաններում և վիմագրերում հանդիպող ժամանակային կաղապարները (ի թագավորութեան, ի պարոնութեան և այլն)՝ ակնհայտ է դառնում, որ այսօրինակ աղբյուրները նույնպես արտահայտել են ժամանակաշրջանի քաղաքական մտածողության առանձնահատկությունները։ Նախ դրանցում նկատելի էր իշխանավորի իրավականության աստիճանը, քաղաքական իշխանության տարբեր տեսակները և այլն։ Ուշագրավ է, որ այս կաղապարներում խիստ սահման է դրվում իշխանության թագավորական և ոչ-թագավորական տեսակների միջև։

8. Մասնավոր քաղաքական գաղափարներից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Մխիթար Գոշի դատաստանագրքից հայտնի մարդկանց նախնական ազատության գաղափարը։ Իր յուրահատկության պատճառով այն մասնագիտական գրականության մեջ հաճախ առաջացրել է իրարամերժ մեկնաբանություններ՝ ընդհուպ մինչև համարվելով «Հայկական վերածնունդ» կոչվող հեղհեղուկ հայեցակարգի հիմնավորում։ Քննության արդյունքում պարզվել է, որ սա բնավ Մխիթար Գոշին պատկանող յուրահատուկ գաղափար չէր, այլ իր արտահայտումներն է գտել Սարգիս Շնորհալու և Ներսես Շնորհալու երկերում։ Ավելին՝ այն ոչ այլ ինչ է, քան Ծննդոց Գրքի յուրօրինակ մեկնաբանության արգասիք։

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Ա. Վարդանյան, «Բյուզանդահայի տեսիլ»-ն ու դրա առնչությունները հայ և բյուզանդական վախճանաբանության հետ, «Պատմա-բանասիրական հանդես», 2023, հ. 2, էջ 255-273:
2. Ա. Վարդանյան, Ժամանակի քաղաքական ընկալումը 11-13-րդ դարերի հայոց վիմագրերում և հիշատակարաններում, «Պատմություն և մշակույթ», 2023, հ. 2, էջ 8-17:
3. Ա. Վարդանյան,Արիստակես Լաստիվերցին և երկու ուղղություն XI դ. հայ պատմագրության մեջ, «Հայոց պատմության հարցեր», 2024, հ. 1, էջ 27-43:
4. Ա. Վարդանյան, Մխիթար Գոշի խորհրդածությունները մարդկանց նախնական ազատության մասին եւ վարդապետաց դասի կայացումը միջնադարյան Հայաստանում, «Էջմիածին», 2024, հ. Դ, էջ 26-35:
5. Ա. Վարդանյան, Ստեփանոս Օրբելյանի եւ Խաչատուր Կեչառեցու քաղաքական մտածողությունը, «Էջմիածին», 2024, հ. Ե, էջ 129-144:
6. Ա. Վարդանյան, Ողբատեսիլային մտածողությունը և թագավորության վերականգնման գաղափարը Հայաստանում 5-12 դդ. (Տեսական դիտարկումներ), «Պատմություն և մշակույթ», 2024, հ. 1, էջ 8-19:
7. Ա. Վարդանյան, Ինչո՞ւ Կիլիկիայում առաջացավ հայկական պետականություն, «Պատմություն և մշակույթ», 2025, հ. 1, էջ 8-16:

ВАРДАНЯН АРЕГ АРМАНОВИЧ

Политические идеи в Армении
(вторая половина XI в. – XIII в.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”

Защита состоится 27-го июня 2025 года в 14:00 на заседании специализированного совета по История Армении 004 КВОН РА при Институте истории НАН РА (адрес: 0019, Республика Армения, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4).

РЕЗЮМЕ

Диссертация представляет собой систематичное исследование политических идей в Армении с использованием обширной базы различных первоисточников (в числе прочих исторические, теологические, догматические, полемические, юридические произведения, жития, комментарии, послания, назидания, плачи, видения и эпиграфика). XI-XIII века являются важнейшим этапом в политической жизни Армении. Кризис политической системы Армянских государств эпохи Багратидов и завоевательная внешняя политика Византии привели к падению Армянского царства в 1045 г. Ситуация усугубилась из-за сельджукского нашествия, в результате чего пали многие оставшиеся армянские государственные образования и началась массовая эмиграция армян в сторону Каппадокии и Киликии.

На фоне этого системного коллапса исследуется эволюция политических идей в Армении. В средневековой историографии появляются толкования событий, резко разнящиеся с точки зрения акцентирования причин падения Армянского царства. Одни восходят к окружению Католикоса Петроса I Гетадардза, а другие к свите царя Гагика II. На этом фоне эволюционирует и традиция плачей и видений. В XI в. зарождается «армянская освободительная легенда» (հայ ազատագրական լեգենդ).

Особенно важно отметить изменения в политической диспозиции армянской феодальной элиты. Эти изменения являются одним из ключевых факторов создания армянских феодальных структур в Киликии, что в итоге привело к зарождению Киликийского армянского царства. В процессе воссоздания армянской государственности, важную роль сыграла и «идея

восстановления царства» (թագավորության վերականգնման գաղափար). Эта идея своеобразно отразилась также в деятельности феодального рода Захаридов.

Важно отметить, что XI-XIII века — это еще и период внутреннего преобразования армянского феодализма, т. е. нахарарской системы (նախարարական համակարգ). Старые роды либо переходят на второй план, либо вовсе уходят с исторического поприща (Багратиды, Арцруниды, Мамиконяны и т. д,), вместо них на первый план выходят новые роды (Рубениды, Пахлавуни, Захариды и т. д.). В связи с этим явлением, меняется и логика легитимизирующих легенд происхождения феодальных домов. В данном контексте, весьма интересен случай рода Орбелянов. В произведениях Степанноса Орбеляна переплетаются разные логики легитимизирующих легенд происхождения, а также общие места традиции плачей и видений. Орбелян мастерским образом пользуется топосами армянской политической традиции для «идеологического подкрепления» воцарения собственного рода.

Особое место в комплексе политических идей эпохи имеет следующая мысль Мхитара Гоша – люди были созданы Богом свободными, но они служат господам по экономическим причинам. Было показано, что эта мысль является интерпретацией 1:26—28 Книги Бытия, которая разнится с традиционной интерпретацией Отцов Церкви и связана с армянской традицией вардапетов.

VARDANYAN AREG ARMAN

Political Ideas in Armenia
(From the second half of the 11th century to the 13th century)

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The Defense of the Disseration will be held on June 27, 2025, at 14^{00} at the Session of the Specialized Council 004 on Armenian History of HESC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4).

SUMMARY

The thesis is a systematic study of political ideas in Armenia based on a vast array of primary sources (including historical, theological, dogmatic, polemical, legal writings, hagiographies, commentaries, epistles, laments, apocalypses, epigraphy etc.). The 11th-13th centuries were witnessed by considerable political turmoil in Armenia. On one hand there was a systemic inner-political crisis, on the other hand Armenia had to face "imperialistic" foreign policy of Byzantium. A constellation of factors led to the fall of the Armenian kingdom in 1045. The situation was aggravated by the Seljuk invasion, as a result of which most of the Armenian polities fell and mass emigration of Armenians towards Cappadocia and Cilicia began.

The evolution of political ideas in Armenia is studied against the background of this systemic collapse. The Interpretations of this situation that appear in Armenian medieval historiography provide contrasting narratives of the events. Some of these narratives go back to the entourage of Catholicos Petros I Getadardz, while others to the retinue of King Gagik II. Concomitantly, the tradition of laments and apocalypses evolves as well. In the 11th century one can trace the original versions of the *Armenian liberation legend* (հայ ազատագրական լեգենդ).

It is especially important to note that this systemic collapse produced changes in the political disposition of Armenian feudal elite as well. These changes are one of the key underlying factors that made the creation of Armenian feudal structures in Cilicia possible, which, in turn, led to the creation

of Armenian kingdom of Cilicia. In the process of recreating Armenian statehood *The Idea of Restoration of Kingdom* (թագավորության վերականգնման գաղափար) also played an important role. This idea found its peculiar reflection in the activities of the feudal family of Zak'aryans as well.

It is important to note that 11th-13th centuries are also a period of internal transformation of Armenian feudalism, i.e. the *Nakharar* system (նախարարական համակարգ). The leading political role of the older families (Bagratids, Artsruni, Mamikonyans, etc.) is taken up by newer ones (Rubenids, Pahlavuni, Zak'aryans, etc.).

This phenomenon results in a chnaging logic of the origin myths of feudal houses. In this context, the case of Orbelyan family is quite remarkable. The works of Stepannos Orbelyan one can find a masterly woven narrative that utilizes origin myths, as well as various topoi of Armenian political tradition (including laments) to provide an "ideological" backing to the enthronement of his own family.

One idea of Mkhitar Gosh has a special place in the context of political ideas of the time. The idea can be formulated as follows: men were created free by God, but they serve their masters out of economic reasons. It was shown that this idea is an interpretation of Genesis 1:26-28, which differs from the traditional interpretation of the Church Fathers and is related to the Armenian tradition of the Vardapetes.